# ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

կազմեց՝ ԱՆՈՒՇԱՒԱՆ ՎՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ
Անթիլիաս, 1984 թ.

Սրանից երեք տարի առաջ՝ 1984 թուին, Անթիլիասում, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տպարանից, լոյս տեսաւ «Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան» գիրքը, աշխատասիրութեամբ Անուշաւան Վրդ. Դանիէլեանի, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Մատենաշարով:

Ցուցակը թէեւ լոյս է տեսել 1984 թուին, բայց միայն այժմ կարողացանք ունենալ ձեռքի տակ, դա էլ շնորհիւ նոյն հիմնարկի, որ նուիրել է Նոր Ջուղայի վանքի Ս. Ներսէս Շնորհալի գրադարանին:

Գրչագրերի ցուցակները, ընդհանուր առմամբ, կարեւոր ու մեծ աղբիւրներ են պարունակում իրենց մէջ, մեր անցեալի պատմութեան, բանասիրութեան, գրականութեան եւ այլ բնագաւառների ուսումնասիրութեանց համար, իրենց մէջ ունեցած բազմազան նիւթերի պատճառով, որոնց կարելի է նմանեցնել թանկարժէք քարերով լեցուն մի սնդուկի, որից ամէն մի հետաքրքիր անձ, կարող է իր ուզածը ձեռք բերել:

Այս «Ցուցակ»ն եւս, որ իր մէջ պարունակում է 223 գրչագրի նկարագրութիւն, ունի զանազան բովանդակութեամբ գրքեր, գրուած Թ—Ժ դարից մինչ 19րդ դարի վերջերը:

Հատորն ունի ԺԵ+654 մեծադիր էջ, որի «Յառաջաբան»ը (էջ՝ Է—Ը) պատկանում է Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ. Վեհափառի գրչին, «Ներածական»ն ու «Շնորհակալիք»ը (էջ Թ—ԺԵ) Անուշաւան Վարդապետին: Վերջում ունի յատուկ անունների, տեղանունների, գրչութեան վայրերի, գրիչների, ծաղկողների, կազմողների, թուղթ կոկողների եւ այլ ցանկեր, ինչպէս եւ գրչագրերի ընդհանուր մի տախտակ, որոնք շատ օգտակար են եւ մեծ դիւրութիւն ցուցակից օգտուողների համար:

Գրքում կան նաեւ մի քանի գունաւոր պատկերներ, որոնք գեղեցիկ մի ճաշակ են տալիս գրչագրերի մանրանկարների, զարդագրերի, լուսանցազարդերի, կազմերի աստառների, կազմերի, խորանների որպիսութիւնից, դրանց հետ կայ նաեւ բոլոր ձեռագրերից նմանահանութեան նմոյշներ, որ մի մեծ առաւելութիւն է այն ցուցակներից, որ ոչ մի գրչագրի նմանահանութիւն իսկ չունեն, որ շատ օգտակար է գրչագրերի համեմատութեան եւ նմանութեան ճշտման տեսակէտից*: Ունի նաեւ մաքուր եւ խնամուած տպագրութիւն եւ սպիտակ ու լաւորակ թուղթ:

Այս գրչագրերի մէջ թէեւ չկայ Նոր Ջուղայում կամ Սպահանում գրուած գրչագիր, բայց կայ Յովսէփ քահանայ Ջուղայեցու «Քրոնիկոն»ը (թիւ 154, էջ 444), որի բնագրի Ա. մասը գրուել է 1740 թուին Նոր Ջուղայում, իսկ Բ. մասը կամ հատորը 1751 թուից 1760 թիւը Բասրա քաղաքում: Այս գրքից երկու օրինակ կայ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում (թիւ 615 եւ 616) եւ երկու

*) Յիշենք այստեղ միջանկեալ, որ Նոր Ջուղայի գրչագրերի ցուցակագրման ժամանակ, մենք հնարաւորութիւն չունէինք, անգամ ուզած ձեռագիրը ձեռքի տակ ունենալու եւ մէկը միւսի հետ համեմատելու համար:

digitised by

օրինակ Մաշտոցի անուան Մատենադարանում (թիւ 1793 եւ թիւ 4381 ժողովածուի մէջ)։ Այս ցուցակում բերուածը թէեւ չունի գրչի յիշատակարանը, բայց նա կարող դրա մէջ յիշուած 1727 թուականին գրուած լինել, որ պատկանում է մի այլ աշխատութեան։ Գրչագիրը գնուել ու լրացուել է Տէր Սամուէլի կողմից 1789–1790 թուականներին, ուստի շատ հաւանաբար բուն գրչագիրն եւս կարող է գրուած լինել 1770ական թուերին եւ ոչ թէ 1727 թուին, երբ դեռ այդ աշխատութիւնը չէր գրուել։

Ինչպէս այս, այնպէս էլ այլ գրչագրերի մէջ, գրչի կողմից գրուած յիշատակագրութիւնները, փոխարէն բովանդակութիւնից յետոյ գրելու, բերուել է բովանդակութեան մէջ (էջ 446, 447, 449), իսկ գրչի յիշատակարանի համար ասուած է «Ցիշատակարան գրչութեան ժամանակի» եւ բերուած է մի քանի տարբեր տարիները, ինչպէս նոյն (թիւ 1154) գրչագրի վերջում (էջ 450) երբ գրուել են 1789, 1790 եւ 1791 թուականներին եւ բուն գրչին չեն պատկանում, այլ լրացնողին կամ յետոյ գրողին։

Թէեւ ըստ հնարաւորին աշխատանք է տարուել, ցուցակը անթերի դարձնելու եւ հէնց այդ բերումով էլ Անտունեան Վարդապետը երեք անգամ Երեւան է գնացել, բայց այդուհանդերձ նկատւում են որոշ բացեր եւ մութ մնացած կէտեր։ Օրինակ թիւ 5 գրչագրի մէջ գտնուած մի երգը, որ նուիրուած է Շօշ (Սպահան) քաղաքին (էջ 84²) եւ կրում է «Տաղ Շօշայ քաղաքին, այսինքն նորոգ Ջուղայու, որ ի Խսփահան», այս երգի ո՛չ հեղինակն է յիշուած եւ ոչ իսկ, եթէ ոչ ամբողջ, գոնեայ առաջին տողը, որպէսզի հնարաւոր լինի իմանալ թէ դա ծանօթ մի տաղ է, թէ մի նոր երգ, որ մեծ հետաքրքրութիւն ունի յատկապէս պարսկահայերի եւ առանձնապէս ինձ համար, որպէս Ջուղայի պատմութեան շատերից-քչերից ծանօթ անձի։

Տեղանունների մէջ եւս կան մոռացումներ, օրինակ յիշուած չեն 270 էջում եղած Բէյրութն ու Անթիլիասը։

Գրքերի կազմը արտաքուստ հէնց կազմ է ասւում, իսկ երբ լոկ թուղթ կամ կարտոն է, չապիկ եւս ասւում է, բայց երբեք փեղկ (էջ 525)։ Փեղկը դրան համար է գործածւում, կամ գրքի բերանակալը։ Ճիշտ չէ որ «դռնակ» ասուի (էջ 438, 524), որ երբեք չի յարմարւում գրքին։

Ի հարկէ այս փոքր թերի-բացերը, որոնք ձեւով չեն ազդում այս աշխատութեան վրայ, դա կարելի է մի կոթողական աշխատանք համարել, որի համար երկար տարիներ մեծ ճիգ ու ջանք է թափուել։

Ջերմօրէն շնորհաւորելով հրատարակութիւնն այս «Ցուցակ»ի, Հայր Անտունեանին մաղթում ենք նոր ոյժ ու կորով, առաւել եռանդուն ձեւով շարունակելու իր յանձնառական աշխատանքները ի փառս մեր դարաւոր մշակոյթի։

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ